ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

ԴՐԱՄԱ

Գերհարդ Հաուպտմանի

(Շարունակութիւն *)

Տիկին Ֆոկերատը և աղախինը այդ միջոցին պատշգամբի վրայ սեղան են պատրաստում։ Ցանկարծ լսում է մեծ շառաչով ափսէների մի կոյտի թափուելը քարերի վրայ և փշուր-փշուր լինելը։ Կարճ ճիչ է արձակում և աղախինը գունատ վազում է սենեակի միջով, պատշգամբից դէպի մուտքը։ Տիկ. Ֆոկերատը նոյնպէս ներս է մտնում յանդիմանելով աղախնոմ։

ՏԻԿԻՆ ՖՕԿԵՐԱՏ. *Ո՛չ, դա ուղղակի անտանելի է, Միննա։ Օր չէ անցնում, որ մի բան չը կոտրէք։ Փչացաւ հիանալի մայոնէզս։՝* (Աղախինը դուրս է գնում դրսի դռնից)։ *Ինձ մօտ այսպիսի բան չէր կարող պատահել։ Աղախինները ինձ մօտ գիտեն, թէ ինչպէս պէտք է վարուել։*

ՅՈՀԱՆՆԷՍ. (Աղմուկի վրայ դուրս գալով ննջարանից)։ *Ի՞նչ է մայրիկ, ինչ է պատահել։* (Գրկում է նրան եւ աշխատում հանգստացնել)։ *Հանգստացիր, հանգստացիր. չը պէտք է բարկանալ, թանկագին մայրիկ։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. (Գլուխը հանելով դռնից)։ *Ի՞նչ պատահեց։*

ՅՈՀԱՆՆԷՍ. *Ոչինչ, ոչինչ։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. (Գլուխը յետ է քաշում դռնից)։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Շատ չնորհակալ եմ—ոչինչ։ Ամբողջ* 10 *մարկի ամանեղ է փշուր-փշուր արել։ Դեռ էլի ոչինչ։ Եւ ամբողջ հիանալի մայոնէզը՝ չէ...* (Ցետ է մղում Յոհաննէսին)։

ՅՈՀԱՆՆԷՍ. *Մայրիկ, սիրելի մայրիկ։ Է՛հ, մի անգամ էլ մայոնէզ չենք ուտի։*

---

*) Տե՛ս «Մուրճ» № 3.

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ո՛չ, ոչ։ Դուք չափազանց թեթև էք վերաբերվում։ Դուք դէն գցելու փողեր չունէք։ Զափից դուրս կակուղ էք ծառաների հետ և միայն երես էք տալիս նրանց։

ՅՈՀԱՆՆԷՍ. Բայց չէ՞ որ դրանք շարունակ ամանների հետ գործ ունեն և...

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ես խօ բռնակալ չեմ։ Ինձ մօտ աղախինները ապրում են վեց, եօթ տարով։ Բայց երբ մի որ և է բան կոտրում են, պարտաւոր են փոխարէնը գնել։ Ի հարկէ, նրանք ձեր տանը կարկանդակ և խաւեար են ուտում։ Բոլորը ձեր այդ նոր գաղափարներն են։ Ազատեցէք ինձ դրանցից։ Լսում էք։

ՅՈՀԱՆՆԷՍ. (Զուարթադէմ)։ Դէ, մայրիկս, աւելի բարի եղիր։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ես հէնց բարի եմ, զաւակս։ (Համբուրում է նրան)։ Ա՛խ դու մոքամոլոր գլուխ։ Ասում եմ՝ ախր կեանքի մարդ չես դու։

Երևում է ինչպէս աղախինը պատշգամբի վրայ սրբում է յատակը և հաւաքում ամանների կտորտանքները։

ՅՈՀԱՆՆԷՍ. (Շփոթուած)։ Ճի՛շտ է, մայրիկ։ (Ուրախ)։ Բայց ինչու՞ դու միշտ այդպիսի աչքեր ես չինում... այդպիսի՞ աչքեր։ Մի ինչ-որ երկիւղ կայ աչքերումդ. մի ինչ-որ լարուածութիւն։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ե՞ս. Ա՛խ, ինչ ես ասում... Ես չը գիտեմ ճշմարիտ... ինչպէս թէ աչքերս մի տեսակ են։

ՅՈՀԱՆՆԷՍ. Մէկ էլ նայիր ինձ։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Անխնէլք տղայ։ (Ցառած նայում է նրան)։

ՅՈՀԱՆՆԷՍ. Ա՜յ, այժմ լաւ է։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Անխնէլք տղայ։ Ես այնպէս կ'ուզէի, որ դու միշտ ուրախ լինէիր, ուրախ մարդ լինէիր, Հանէս։

ՅՈՀԱՆՆԷՍ. Այդ, մայրիկ, դու երբէք չես տեսնիլ. գոհ մարդիկ փեթակում եղած արու մեղուների նման են. ողորմելի ոչնչութիւններ։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ինչ օգուտ այդ ամենից...

ՅՈՀԱՆՆԷՍ. (Աւելի լուրջ եւ մի եւ նոյն ժամանակ յուզուած)։ Եւ երեխան, որ այնտեղ այժմ քնած է, նոյնպէս պէտք է ինձ նման լինի, մի իսկական դժգոհ մարդ։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Աստուած չանէ, Հանէս։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Նա ընդհանրապէս ուրիշ տեսակ մարդ պիտի դառնայ, քան ես եմ։ Ես դրա մասին կը հոգամ։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Մարդը ենթադրում է, իսկ Աստուած կարգադրում։ Մենք ես արել ենք, ինչ որ կարողացել ենք։

ՅՈՀԱՆՆԷՍ. Է՛հ, մայրիկ, ես էլ վերջապէս ուղղակի անաջողակ մէկը չեմ։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ի հարկէ ոչ։ Ես այդ տեսակ բան չեմ ասում։ Այդ ես բնաւ չեմ էլ ուզում... Բայց դու հիմա հէնց ինքըդ ասացիր, որ Ֆիլիպպը պէտք է ուրիշ տեսակ լինի։ Ես... ես... լսիր. դու չէ՞ որ չես հաւատում... Դու բոլորովին չես հաւատում ողորմած Աստուծուն։ Դու՝ իսկն ասած, ոչ մի կրօն չունես։ Իսկ այդ պէտք է մեծ տանջանք պատճառի։

ՅՈՀԱՆՆԷՍ. Կրօն, կրօն։ Իրաւ է ես չեմ հաւատում, որ Աստուած մարդու տեսք ունի, մարդու պէս է գործում, որդի ունի և այդ օրինակ բաներ։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց, Յոհաննէս, պէտք է հաւատալ։

ՅՈՀԱՆՆԷՍ. Ոչ, մայր։ Կարելի է չը հաւատալ և այնու ամենայնիւ ունենալ կրօն։ (Մի քիչ յափշտակուած)։ Ով չանում է ճանաչել բնութիւնը, նա ձգտում է ճանաչել Աստուծուն։ Աստուած՝ բնութիւնն է։ «Ի՞նչ կը լինէր մի Աստուած, որ միայն դրսից է ներգործում և ամբողջ տիեզերքը մատի նշանով սպիպում է պտոյտ գալ։ Նրան վայել է տիեզերքը շարժել և կառավարել ներքուստ», ասում է Գէօթէն, մայրիկ. իսկ նա այդ աւելի լաւ էր հասկանում, քան աշխարհիս բոլոր պաստօրները և հոգևոր տեսուչները։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ա՛խ, զաւակս։ Երբ ես լսում եմ քո այդ խօսքերը... շատ ափսոսում եմ, որ դու աստուածաբան չը մընացիր։ Ես յիշում եմ դեռ, թէ քո փորձնական քարոզից յետոյ ինչ ասաց ինձ սարկաւագը...

ՅՈՀԱՆՆԷՍ. (Զուարճութեամբ) Մայր, մայր. անցած-գնացած ժամանակներ։ (Լսւում է դռան զանգը)։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Դրսի դուռն է—բայց չէ՞ որ կողպուած չէ։ (Մի քանի քայլ է անում դէպի մուտքի դուռը։ Բաղխում են մուտքի դուռը)։

ԼՈՒԱՅԱՐԱՐՈՒՀԻ ԼԷՄԱՆ. (Հագին կապոյտ խուճացած չքի դերիա, ներս է մտնում վախվխելով)։ Բարի լոյս։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ.
ՅՈՀԱՆՆԷՍ. } (Ոչ բոլորովին միաժամանակ)։ Բարև. տիկին Լէման։

ՏԻԿ. ԼԷՄԱՆ. Ես միայն ուզում էի տեսնել թէ... Ներեցէք տիկին Ֆօկերատ։ Ես երկար որոնում էի տնկիցիս։

ՅՈՀԱՆՆԷՍ. Ի՞նչպէս չէ, տիկին Լէման, պ. Բրաունը այստեղ է։

ՏԻԿ. ԼԷՄԱՆ. Ծը, ծը՛ (Աչքի անցնելով սենեակը)։ Եթէ կարողանայի այսպէս սարքուել։

ՏԻԿ. ՏՕԿԵՐԱՏ. Ի՞նչպէս է ձեր քէֆը, տ. Լէման։

ՏԻԿ. ԼԷՄԱՆ. Է՜հ, տ. Ֆօկերատ, լաւ չէ բանս. իսկի լաւ չէ։ Ծերուկիս դուրս վռնդեցի։ Էլ անկարելի էր տանել։ Այժմ ինքս էլ չը գիտեմ՝ ինչ անեմ երեխաներիս. հինգ երեխայ է, ինչպէս պահեմ...

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Ի՞նչ էք ասում։ Բայց...

ԼԷՄԱՆ. (Աւելի ու աւելի բացուելով)։ Գիտէք, տ. Ֆօկել տատ. եթէ ես ինքս էլ գոնէ այսքան թոյլ չը լինէի... Թէ չէ շատ եմ ձեռքից ընկել. չարութիւնը, հասկանում էք, մարդ արարածին բոլորովին փչացնում է ու ստորացնում. հէնց այդ պատճառով էլ ինձ ոչ ոք չէ կարող մեղադրել։ Ես ասացի իմ ծերուկիս։ Աղջիկ, ասում եմ, ի սէր Աստուծոյ, գնա՛ քո ընկերակիցների մօտ, ասում եմ։ Գնա՛ քո հարբան ընկերներիդ մօտ, ասում եմ։ Ես ինքս կաշուիցս դուրս կը գամ և հինգ երեխաների-կը պահեմ մենակ։ Տես, ասում եմ, քեզնից ինչ օգուտ. քո աշխատածով քո կոկորդն ես թաց անում, ասում եմ։ Դու խելք չունես, ասում եմ։ Եթէ դու խելք ունենայիր, ասում եմ, երեխաներիդ և կնոջդ այս խեղճութեան չէիր հասցնի, ասում եմ։ Տեսնում էք, տիկին Ֆօկերատ, ես նրան հէնց այդպէս ասացի. թէև գիտէք, այդ բոլորը ինձ համար անտանելի էր։ Ես կ'ուզէի այնպէս խօսել, որ փչի պէս ծակէր. բայց ինչ օգուտ այդ բոլորից։ Էլի ճշմարտութիւնն ասել, այդ աւելի լաւ է։—Դէհ, մտածում էի, Աստուած ողորմած է, Նա ինձ կը պաշտպանի իմ հինգ երեխաներիս հետ։ (Խնչում է եւ սրբում աչքերը)։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. Մենք միշտ պիտի...

ՏԻԿ. ԼԷՄԱՆ. Հա՛, հա՛, ես հէնց այդ ասացի։ Գնա՛ դու թէկուզ Հնդկաստան, ասում եմ։ Գնա՛։ Եթէ դու աղնիւ մարդ ես, ասում եմ, և մի երկու պֆենիգ յետ ձգես, ասում եմ, այն ժամանակ դեռ կարելի է ապրել։ Իսկ ես աղնիւ կին եմ, տիկին Ֆօկերատ։ Թող իմ առաջ ինչ ուզում է դրուած լինի։ Ես մատովս չեմ կպցնիլ...

ՅՈՀԱՆՆԷՍ. Դուք կամենում էք պ. Բրաունի հետ խօսել, տիկին Լէման։

ՏԻԿ. ԼԷՄԱՆ. Չէ, ես իսկապէս մոռացայ բոլորովին։ Այնտեղ մի օրիորդ կայ, նա ուզում է նրան տեսնել։ (Մուտքի դռնից նեռս է երեւում օրիորդ Մաուի գլուխը եւ իսկոյն յետ քաշուում։ Յոհաննէսը տեսնում է նրան)։

ՅՈՀԱՆՆԷՍ. Համեցէք... համեցէք, խնդրեմ. ներս մտէք։ (Տիկիններին, որոնք ոչինչ չեին նկատել)։ Օրիորդը։ Այդ օրիորդն էր։ (Տիկին Լէմանին)։ Դուք պէտք է նրան ներս բերէք։ (Բաց անելով մուտքի դուռը)։ Խնդրեմ, շնորհալի օրիորդ։ Դուք կա-

մենում էք իմ բարեկամ Բրաունին տեսնել։ Բարի եղէք, ներս չնորհ բերել։

Օրիորդ Աննա Մառ 24 տարեկան է. միջահասակ, փոքրիկ գլխով, մութ, հարթ սանրած մազերով, նուրբ ջղային դիմագծով։ Նրա համարձակ շարժուածքների մէջ կայ գրացիա և ոյժ։ Մի որոշ ինքնավստահութիւն նայուածքում, մի որոշ կայտառութիւն, որ միւս կողմից չափաւորւում է համեստութեամբ և տակտով, այնպէս որ նա բնաւ չէ խախտում կանացիութեան տպաւորութիւնը։ Աննան սև հագուստով է։

ՕՐ. ԱՆՆԱ ՄԱՌ. (Ներս է մտնում): Ա՛խ, աղաչում եմ ինձ ներէք։ Ինձ չափազանց անախորժ է ձեզ անհանգստացնել։

ՅՈՀԱՆՆԷՍ. Ո՛չ, համեցէք, խնդրեմ, խնդրեմ։

ՕՐ. ԱՆՆԱ. Տիկին Լէմանը յետ չը դարձաւ—իսկ ես ուզում էի նրան միայն ասել—որ արդէն... որ ես պարոն Բրաունին կարող եմ ուրիշ անգամ տեսնել։

ՅՈՀԱՆՆԷՍ. Բայց ո՛չ, խնդրեմ.—Ես իսկոյն կը կանչեմ Բրաունին։ Նստեցէք, խնդրեմ։

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ չնորհակալ եմ։ (Մնում է կանգնած): Ճշմարիտ, ինձ շատ անախորժ է, որ...

ՅՈՀԱՆՆԷՍ. Բայց խնդրում եմ, չնորհալի օրիորդ։ Ես այս րոպէիս կը կանչեմ Բրաունին։

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց ես ձեզ նեղութիւն եմ պատճառում, ես...

ՅՈՀԱՆՆԷՍ. Բնաւ, օրիորդ։—Ներեցէք, իսկոյն։ (Դուրս է գնում պատշգամբը):

Փոքր դադար ու թեթև շփոթութիւն։

ՏԻԿ. ԼԷՄԱՆ. Դէ, ուրեմն, ես գնամ։ (Օր. Աննային): Վերադարձին դուք անշուշտ մենակ էլ կը գտնէք ճանապարհը։

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ չնորհակալ եմ, որ ինձ ուղեկցեցիք։ Թոյլ տուէք ձեզ մի ինչին... (Տալիս է նրան փող):

ՏԻԿ. ԼԷՄԱՆ. Շատ չնորհակալ եմ, շատ չնորհակալ։ (Տիկ. Ֆոկերատին): Ահա իմ վաստակը այսօր, տիկ. Ֆոկերատ։ Աղնիւ խօսք։ Թէև դա հեշտ բան չէ, բայց ես դարձեալ ասում եմ, լաւ է մարդ իր կաշին ծախի, քան ապրի մի այնպիսի հարբանի հետ։ Հա... Հարկաւոր է միայն հաւատալ ողորմած Աստուծուն։ Գթառատ Աստուած դեռ ինձ երբէք անտես չի թողել։ (Բռնելով դռան կոթից)։ Հիմա ուղղակի կը գնամ խանութ, մի բան գնելու իմ հինգ ձագուկներիս համար։ (Դուրս է գնում):

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Կանչում է նրա յետեւից)։ *Մտէք խոհանոց։ Այնտեղ քիչ-միչ բան կայ ձեզ համար։* (Մօտեցնում է իր աթոռը Աննայի համար դրուած աթոռին եւ նայում է)։ *Խնդրեմ, օրիորդ, չէք կամենալ նստել։*

ՕՐ. ԱՆՆԱ. (Դանդաղութեամբ նստելով)։ *Ես ամենեւին յոգնած չեմ, ես...*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Այս կողմերին դուք ծանօթ էք։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Ո՛չ։—Ես ռուսաց Օստզէեան գաւառից եմ։ Ես...* (Շփոթուած լռութիւն)։

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Այս կողմերը շատ աւազոտ են։ Ինձ դուր չէ գալիս այստեղ։ Ես Բրէսլաուի շրջակայքից եմ։ Եւ ամեն բան այստեղ այնպէս թանգ է, դուք երեւակայել անգամ չէք կարող։ Իմ մարդս ազնուականների կալուածների կապալառու է։ Գործը վատ չէ գնում, մենք կարողանում ենք երբեմն էլ մի բան ուղարկել մեր երեխաներին։ Լիճը դուք տեսել էք։ Իսկապէս շատ գեղեցիկ է։ Պէտք է ասել, որ լիճը իսկապէս գեղեցիկ է։ Մեր ամառանոցը շատ յարմար է։ Ուղիղ եզերքի մօտ է։ Մենք ներքեւը պարտիզում երկու նաւակ ունենք։ Բայց ես չեմ սիրում, երբ երեխաները նաւարկում են։ Ես շատ վախկոտ եմ։—Թոյլ տուէք հարցնել, դուք այժմ Բերլինո՞ւմ էք ապրում։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Այո։—Ես այնտեղ առաջին անգամն եմ։ Ես կամենում եմ Բերլինը մի լաւ տեսնել։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Օ՜, ի հարկէ։ Բերլինը արժէ տեսնել։—Բայց շատ աղմկալի է։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Օ, ի հարկէ. շատ աղմկալի է։ Մանաւանդ երբ մարդ սովոր է փոքր քաղաքներին։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Դուք որտեղից էք, եթէ թոյլ տաք...*

ՕՐ. ԱՆՆԱ. *Ես գալիս եմ Բէվելից և վերադառնում եմ Ցիւրիխ։ Վերջին չորս տարիները ես ապրում էի Ցիւրիխում։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Այո, գեղեցիկ Շվեյցարիա։—Դուք երեւի ազգականներ ունէք Ցիւրիխում։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Ո՛չ, ես ուսանում եմ։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Դուք... համալսարանո՞ւմ։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Համալսարանում։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Դա անկարելի է։ Նշանակում է դուք ուսանողուհի էք։ Ի՞նչ էք ասում։ Դա շատ և շատ հետաքրքրական է։—Ուրեմն իրա՞ւ ուսանողուհի էք։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Այո, յարգելի տիկին։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Ասացէք, խնդրեմ։ Եւ ի՞նչ, այդքան շատ սովորելը հաճելի՞ է ձեզ։*

ՕՐ. ԱՆՆԱ. (Զուարթ)։ *Օ, ի հարկէ։ Շատ—անչուշտ յայտնի աստիճան։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Կարելի՞ բան է դա։*

Յոհաննէսը և Բրաունը երևում են պատշկամբում։ Կանայք տեսնում են, որ նրանք մօտենում են, վեր են կենում։

ՕՐ. ԱՆՆԱ. *Ճշմարիտ շատ եմ ցաւում, յարգելի տիկին, ձեզ անհանգստացնելուս համար։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Խնդրեմ, սիրելի օրիորդ. իսկապէս ինձ շատ ուրախացրեց երես առ երես տեսնել մի իսկական ուսանողուհի։ Մեզ մօտ երբեմն զանազան անմիտ բաներ են պատմում դրանց մասին։ Դուք աղգական էք պարոն Բրաունին։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Ո՛չ—մենք ծանօթացանք իրար հետ Պարիզում, ցուցահանդիսին։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Մեկնելով նրան ձեռքը)։ *Մնաք բարով։ Ինձ իրօք մեծ ուրախութիւն պատճառեց...*

ՕՐ. ԱՆՆԱ. *Խնդրեմ... կրկին խնդրում եմ, ներեցէք ինձ։*

Տիկ. Ֆօկերատը գլուխ տալով հեռանում է մուտքի դռնով։

Յոհաննէսը և Բրաունը մի քանի վարկեան խորհրդակցում են պատշկամբում։ Խորհրդակցութիւնը վերջացնելով, Յոհաննէսը մնում է պատշկամբում, մինչդեռ Բրաունը մտնում է սենեակը։

ԲՐԱՈՒՆ. (Զարմացած)։ *Օրիորդ Մառ։՞ Դուք։՞։՞.*

ՕՐ. ԱՆՆԱ. *Այո՛—բայց և յուսով եմ, դուք ինձ այնքան անտակտ չէք համարի... մեղաւորը ձեր տանտիրուհին է. այդ տարօրինակ տիկին Լէմանն է, որ ես ձեզ մինչև այստեղ...*

ԲՐԱՈՒՆ. *Նուիրական Բիմբամ։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Դուք չէք մոռացել ձեր նուիրական Բիմբամը։*

ԲՐԱՈՒՆ. *Բայց ես երազումս անգամ այդ տեսակ բան չէի սպասում։ Դա իսկապէս հիանալի է։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Ուրեմն էլի մնում է ձեր նախկին «հիանալին»։ Ձեզ համար ամեն ինչ միշտ հիանալի է։ Դուք ես բնաւ չէք փոխուել, իրաւ։*

ԲՐԱՈՒՆ. *Կարծում էք։ Բայց օրիորդ, հանեցէք ձեր վերարկուն։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Ո՛չ, ոչ։—Ի՞նչ էք ասում։ Ես միայն ուզում էի տեսնել, թէ ինչ էք անում դուք։* (Զարահճի նեցգուբեամբ)։ *Գլխաւորապէս ձեր մեծ նկարի մասին էի կամենում տեղեկանալ։ Արդէն կարելի՞ է նրանով աքանչանալ։*

ԲՐԱՈՒՆ. *Ստուերը, գաղափարն անգամ գոյութիւն չունի, ոչ էլ կտաւն է գնուած, օր. Աննա։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Լաւ չէ. իսկ եմ ասում, շատ վատ է։ Իսկ դուք այնպէս հաստատ ինձ խոստացաք։*

ԲՐԱՈՒՆ. Մարդս մտածում է, իսկ կառապանը վարում է։ Սակայն կրկին խնդրում եմ, հանուեցէք օրիորդ։

ՕՐ. ԱՆՆԱ. Հիմա ես ձեզ տեսայ, պ. Բրաուն, և յոյս ունեմ...

ԲՐԱՈՒՆ. Ո՛չ, ոչ. դուք պէտք է այստեղ մնաք։

ՕՐ. ԱՆՆԱ. Այստե՞ղ։

ԲՐԱՈՒՆ. Այո։ Երևի դուք չը գիտէք, որտեղ ենք մենք։ Մենք Յոհաննէս Ֆոկերատի մօտ ենք։ Անկասկած դուք նրան բաւական ճանաչում էք իմ պատմածներից. բայց այդ այսօր այստեղ կնունք է կատարւում։ Դուք ճիշտ ժամանակին էք գալիս։

ՕՐ. ԱՆՆԱ. Ախ, ո՛չ, ոչ։ Այդ բոլորովին անկարելի է։ Մանաւանդ որ այսօր ես պէտք է քաղաքում շատ տեղեր գնամ։

ԲՐԱՈՒՆ. Այսօր բոլոր տեղերը փակ են։

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ ոչինչ։ Ես պէտք է միայն լինեմ ծանօթներիս մօտ։ Բայց մի երևակայէք, որ դուք արդէն ազատւում էք ինձանից։ Մենք պէտք է դեռ մի անգամ էլ երկար զրուցենք իրար հետ։ Ես դեռ պէտք է ձեզ խրատ կարդամ. ա՜խ, դուք խոստմնազանց։ Դուք, ինչպէս տեսնում եմ, առաջուայ նման պատկերներ միայն ձեր գլխում էք նկարում։

ԲՐԱՈՒՆ. Նախ պէտք է մարդ իր գլխում հոգեպէս պարզի։ Իսկ վրձինները չեն փախչի։

ՕՐ. ԱՆՆԱ. Հը, ո՞վ գիտէ։

ԲՐԱՈՒՆ. Բայց ես ձեզ հիմա չեմ թողնի, որ գնաք. լսէք ինձ։

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՛չ, խնդրում եմ, պ. Բրաուն, թողէք ինձ հանգիստ։

ԲՐԱՈՒՆ. (Կանչում է)։ Հա՛նս, Հա՛նս։

ՕՐ. ԱՆՆԱ. Խնդրում եմ։

Յոհաննէսը մտնում է կարմրելով։

ԲՐԱՈՒՆ. Թո՛յլ տուէք ձեզ ծանօթացնել։ Իմ բարեկամ Յոհաննէս Ֆոկերատ—օրիորդ Աննա Մառ։

ՕՐ. ՄԱՌ. } (Միաժամանակ)։ Ես ձեր մասին այնքան
ՅՈՀԱՆՆԷՍ. } շատ եմ լսել։

ԲՐԱՈՒՆ. Երևակայիր, Հա՛նս. օրիորդն ուզում է արդէն գնալ։

ՅՈՀԱՆՆԷՍ. Այդ իմ կնոջս և մեզ բոլորիս շատ կը վշտացնի։ Չէ՞ք ուզում նուիրել մեզ այս երեկոն։

ՕՐ. ԱՆՆԱ. Ճշմարիտ ես չը գիտեմ... Բայց երբ դուք ինձ ասում էք, որ ես ձեզ անհանգստութիւն չեմ պատճառի—ուրախութեամբ ես մնում եմ։

ՅՈՀԱՆՆԷՍ. *Ամենևին, ոչ մի կերպ։* (Օգնում է նրան հագնել վերնազգեստը եւ տալիս է Բրաունին)։ *Կախիր, խնդրում եմ։ Ես իսկոյն կնոջս կը կանչեմ...* (Մօտենում է ննջարանի դռանը, եւ կանչում դեպի ներս)։ *Կէթէ։* (Մտնում է ննջարանը)։

ՕՐ. ԱՆՆԱ. (Ուղղելով հայելու առաջ հագուստը)։ *Ձեր բարեկամը շատ սիրալիր է։*

ԲՐԱՈՒՆ. *Գուցէ մի քիչ էլ չափազանց։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Ա՜խ, ինչպէս թէ։*

ԲՐԱՈՒՆ. *Ես կատակ եմ անում։ Նա շատ լաւ տղայ է։ Միայն երբ բանը նրա գրուածքին է դալիս, այն ժամանակ նա դժուարամարս է դառնում։ Ահա կը տեսնէք. եթէ դուք երեկոյեան մնաք այստեղ, նա իր աշխատութիւնը անպատճառ կը կարդայ ձեզ։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Ինչի՞ մասին է նրա գրուածքը։*

ԲՐԱՈՒՆ. *Ինձ համար շատ գիտնական մի բան, ինչ-որ փիլիսոփայական-քննադատական-պսիխօ-ֆիզիօլոգիական մի գրուածք։ Ես ինչ գիտեմ։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Այդ ինձ հետաքրքրում է։ Ես ինքս էլ, «փիլիսոփայութեան հետ կապ ունեմ», ինչպէս ասում են սովորաբար։*

ԲՐԱՈՒՆ. *Դէ, օրիորդ, եթէ այդպէս է, դուք այնքան էլ չուտ չէք պրծնի նրանից։ Եթէ դուք սկսէք հետաքրքրուել նրա աշխատութիւնով, անասելի կերպով նրան կ'ուրախացնէք։*

ՅՈՀԱՆՆԷՍ. (Գալով ննջարանից)։ *Բրաուն։*

ԲՐԱՈՒՆ. *Ի՞նչ է։*

ՅՈՀԱՆՆԷՍ. *Գնա կէթէի մօտ։ Հանգստացրու նրան քիչ։ Փոքրիկի մի կողիկը ինչ-որ շատ է դուրս ցցուած։*

ԲՐԱՈՒՆ. *Ի՞նչ ես ասում։*

ՅՈՀԱՆՆԷՍ. *Ի հարկէ, դատարկ բան է. բայց էլի գնա։ Կէթէն իզուր տեղը իր համար հոգսեր է ստեղծում։*

ԲՐԱՈՒՆ. *Լաւ, լաւ։ Գնացի։* (Մտնում է ննջարանը)։

ՅՈՀԱՆՆԷՍ. *Կինս խնդրում է ներէք, օրիորդ։ Նա կը գայ մի քանի րոպէից յետոյ։ Նա պատուիրել է ինձ առայժմ ցոյց տալ ձեզ մեր պարտէզը։ Եթէ ի հարկէ, դուք դէմ չէք...*

ՕՐ. ԱՆՆԱ. *Օ՜, մեծ ուրախութեամբ։*

ՅՈՀԱՆՆԷՍ. (Ժպտալով)։ *Մենք իսկապէս գեղեցիկ անկիւն ունենք—այսինքն մենք միայն վարձել ենք։ Այստեղ ամենահրապուրիչը լիճն է։ Դուք տեսել էք Մուգգէլեան լիճը։* (Նա տալիս է օրիորդին հովանոցը։ Երկուսն էլ խօսակցելով գնում են դէպի պաստգամբի դուռը)։ *Ես ատում եմ քաղաքը։ Իմ իդէալն է ընդարձակ պարկ՝ շրջապատած բարձր պատերով։ Այնտեղ մարդ կարող է ապրել՝ անարգել նուիրուած իր նպատակներին։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Էպիկուր։*

ՅՈՀԱՆՆԷՍ. *Միանգամայն իրաւացի էք, այո։ Բայց հաւատացնում եմ ձեզ, ուրիշ կերպ անկարելի է... Ձեզ համար դով չի լինի։*

ՕՐ. ԱՆՆԱ. *Օ՜, ոչ. ես ինձ սովրացրած եմ ցրտի։*

Յոհաննէսը թողնում է Աննային առաջ գնալ և հետևում է նրան դէպի պատշգամբը։ Այստեղ նրանք մնում են մի քանի վարկեան։ Երևում է, թէ ինչպէս Յոհաննէսը ցոյց է տալիս և բացատրում օտարուհուն տեսարանները։ Վերջապէս երկուսն էլ անհետանում են պարտիզում։

Բրաունը, իսկ նրա հետևից Կէթէն, դուրս են գալիս Ննջարանից։

ԲՐԱՈՒՆ. (Շուրջը նայելով) *Նրանք գնացել են։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Հա։*

ԲՐԱՈՒՆ. *Ո՛չ, ոչ, ինչ վերաբերում է կողին, այդ բոլորովին բնական է։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Իսկապէս ես բոլորովին ճնշուած տրամադրութեան մէջ եմ։*

ԲՐԱՈՒՆ. *Ճնշուած։ Ինչու։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. (Ժպտալով)։ *Ես ուզղակի սրտի բաբախում ունեմ։*

ԲՐԱՈՒՆ. *Դուք դեռ ես ջղային դրութեան մէջ էք։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Նա չատ հպարտ է։*

ԲՐԱՈՒՆ. *Ո՞վ։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Այն օրիորդը։*

ԲՐԱՈՒՆ. *Մառը. հպարտ.—Ամենևին։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Ինչու չէ. եթէ ես լինէի նրա տեղ, կարող էի...*

ԲՐԱՈՒՆ. *Ամենևին. ոչ, ոչ։ Դուք իսկապէս նրան ստորացնում էք։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Ընդհակառակը.—ես սաստիկ պատկառանք եմ զգում դէպի նա։*

ԲՐԱՈՒՆ. *Հա, ասենք... Նա լինում է երբեմն ճիշտ որ քիչ մեծամիտ, բայց հեշտ է նրան յետ սովորացնել այդ բանից։*

Դադար։

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Հանէսը այնտեղ մոռացել է իր ձեռագրից մի թերթիկ։ Օրիորդը հասկանում է որ և է բան դրանից։*

ԲՐԱՈՒՆ. *Ինչպէս չէ։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Հա, ախ.—ինձ նմանները դրանց պէս կըրթուած մարդկանց մէջ մի քիչ խղճալի դեր են կատարում։*

ԲՐԱՈՒՆ. *Ա.—ախ։ Իմ իմացածս էլ չատ բան չէ։ Եթ էլ*

մեծ ուսում չեմ առել։ Բայց այնուամենայնիւ ինձ չէ կարող զարմացնել այդ չնչին գիւղական իմաստութիւնը։

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Օրիորդը, ի հարկէ, խօսում է փայլուն։*

ԲՐԱՈՒՆ. *Փայլուն։ Ո՛չ։ Նա խօսում է այնպէս... ինչպէս մենք բոլորս ենք խօսում։ Նա շատ խելացի է—բայց այդ պատճառով...*

ՏԻԿ. ԿԷԹԷ. (Ժպտալով)։ *Իմ աղջիկ ժամանակս կարծես մի ճպուռ էի։ Մենք ամբողջ օրերով չարունակ չրթչրթում էինք դատարկ բաների մասին։ Այդ գոնէ անցաւ։ Իսկ հիմա ամենևին չեմ համարձակւում խօսել և առհասարակ վախենում եմ մի բան ասել* (Մոտենում է դեպի պատշգամբը տանող դռան)։ *Մայրիկ, մի բաժին աւելի դիր։*

ՏԻԿ. ՖՈԿԵՐԱՏ. (Պատշգամբից, ուր նա հացը գցում է)։ *Էլ ով է լինելու։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Օրիորդը։*

ՏԻԿ. ՖՈԿԵՐԱՏ. *Ո՞վ։—Հա հասկացայ.—լաւ, լաւ, Կէթէ։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. (Նորից Բրաունին, հառաչելով)։ *Ա՛խ, հիմա ամեն բան փչացաւ։ Ոյժ ես գործ դնում.—բայց ինչ օգուտ դրանից։ Արդէն շատ ուշ է։* (Մոտենալով վարդի փնջին)։ *Նայեցէք, ինչ գեղեցիկ է երևում։ Դեռ վարդ են։* (Մեկնում է փունջը Բրաունին հոտոտելու համար)։ *Եւ ինչպէս թունդ են բուրում։*

ԲՐԱՈՒՆ. *Հրաշալի՜։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. (Դնում է փունջը իր տեղը)։ *Նա ջահէլ է։*

ԲՐԱՈՒՆ. *Ո՞վ։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Օր. Մառը։*

ԲՐԱՈՒՆ. *Չը գիտեմ քանի տարեկան է։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Ես արդէն քսան և երկու տարեկան եմ։ Այո, մենք անցրել ենք մեր հասակը։*

ԲՐԱՈՒՆ. *Խիստ անցրել էք։* (Ծիծաղում է)։

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Ա՛խ, ինչպէս սահմանափակ է իմ միտքս։*

Տիկ. Ֆոկերատը դռնից մտցնելով գլուխը։

ՏԻԿ. ՖՈԿԵՐԱՏ. *Սիրելիք, ինձ մօտ ամեն բան արդէն պատրաստ է։* (Յետ է քաշում գլուխը։ Կանչում է պատշգամբից դեպի պարտեզը)։ *Հայրի՜կ, հայրի՜կ։*

Պարոն Ֆոկերատը և պաստորը, երկուսն էլ շատ լաւ տրամադրութեան մէջ բարձրանում են պատշգամբի սանդուղներով։

ՖՈԿԵՐԱՏ. (Բաց դռներից, պաստորի վերարկուն ձեռքին)։ *Հա՛։ Չէք ցանկանայ ներս մտնել և հանել ձեր զգեստը։ Հահահա՛։* (Սրտանց ծիծաղում է)։

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. (Ձեռքին բռնած գլխարկը, ձեռնափայտը եւ սիգար ծխելով)։ *Հահահա։ Իսկապէս որ չատ զուարճալի է։ ինձ լսեցէք։ Պֆ, պֆ—չատ զուարճալի է* (Ծիծաղում է)։

ՖՕԿԵՐԱՏ. *Եւ ասում են, որ այդ ճիչտ եղկութիւն է, պարոն պաստոր։* (Տանում է նրա հետեւից վերարկուն)։

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. *«Պարոն Նոր-Ննջեցեալ»։* (Ծիծաղում է)։ *Պֆ, պֆ՝։—«Պարոն Նոր-Ննջեցեալ, գուցէ էլի մի բան էք ցանկանում»։* (Ծիծաղում է. կախում է պլեդը եւ գլխարկը, բասակը մնում է գլխին)։

ՖՕԿԵՐԱՏ. (Ծիծաղելով նրա հետ միասին)։ *«Պարոն Նոր-Ննջեցեալ»...* (Դիմելով Բրաուլինին)։ *Բանը պատահում է մեզ մօտ գիւղում, մի թաղման, պ. Բրաուն... Դագաղի չուրջ կանգնած են յուղարկաւորները, դիտէք...* (Սարսափ արտայայտելով, վռազ)։ *Յանկարծ, մի ինչ-որ բան ժաժ է դալիս։ Գուցէ մէկն ու մէկը աթոռն է շարժում, կամ թէ մի այլ բան է շարժում։* (Սարսափ արտայայտելով)։ *Բոլորը միասին ցնցւում են։—Միայն ժամհարը, հահահա, չը վախեց, երկչոտներից չէր։ Մօտենում է զգուշութեամբ դագաղին, հահահա, ու թխկթխկացնում։* (Ձայնը նրմանեցնելով ժամհարի ձայնին եւ մատներով թխկթխկացնելով սեղանին)։ *«Պարոն Նոր-Ննջեցեալ—Պարոն Նոր-Ննջեցեալ։ Գուցէ էլի մի բան էք ցանկանում»։*

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. (Ծիծաղելով)։ *Այո, լսեցէք։ Պֆ, պֆ՝։ Այդ ճիչտ է, ես ճանաչում եմ այդ ժամհարներին։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. (Մտնում է)։ *Դէ, հայրիկ, համեցէք, թէ ոչ ապուրը կը սառչի։*

ՖՕԿԵՐԱՏ. *Ուրեմն, պարոն պաստոր, համեցէք, խնդրեմ։*

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. *Լսեցէք, դուք այնու ամենայնիւ ձեր ասածն արիք։* (Դեռ է ձգում սիգարի մնացորդը մոխրամանի մէջ եւ առաջարկում կուռը տիկին Ֆօկերատին)։ *Տիկին Ֆօկերատ։*

ՖՕԿԵՐԱՏ. (Կամենալով կուռը տալ Կեթէին)։ *Բայց ուր է Յոհաննէսը։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Իսկ օրիորդը.—Դա արդէն լաւ չէ Յոհաննէսի կողմից։ Հիանալի ճաշը չէ՞ որ...*

ՖՕԿԵՐԱՏ. (Ուրախ)։ *Հա, լսում էք, պ. պաստոր. «բերանի և գինու թասի մէջ տեղ». հա հա հա։՝*

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. *«Սատանան միչտ այնտեղ». հա հա հա։՝*

ՖՕԿԵՐԱՏ. *Երևի այդ այն կինն էր։ Մենք տեսանք այնտեղ լճի վրայ մի զոյգ։ Այնպէս չէ՞, պարոն պաստոր։*

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. *Ի հարկէ, ի հարկէ։ Նրանք այնտեղ նաւարկում կը լինեն։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Ա՛խ, ես կարծում եմ, լաւ է՝ մենք նըստենք ճաշի։*

ՖՕԿԵՐԱՏ *Ով չի գալիս ժամանակին...*

ԲՐԱՈՒՆ. (Որ նայում էր պատշգամբից դէպի պարտէզը, վերադառնում է)։ *Նրանք գալիս են, գալիս են։*

ՖՕԿԵՐԱՏ. *Եւ արդէն ժամանակն էր։*

Յոհաննէսը և օր. Աննան բարձրանում են պատշգամբը։

ՅՈՀԱՆՆԷՍ. *Մենք ուշացանք։*

ՖՕԿԵՐԱՏ. *Հէնց ժամանակն է։*

ՅՈՀԱՆՆԷՍ. *Խնդրում եմ ներէք։ Մենք... Այնպէս հրաշալի էր ջրի վրայ... Թոյլ կը տաք։* (Ներկայացնելով)։ *Պարոն պատոր Կոլլին՝ իմ հայրս՝ իմ մայրս։*

ՏԻԿ. ՖՕԿԵՐԱՏ. *Մենք արդէն ծանօթ ենք։*

ՅՈՀԱՆՆԷՍ. *Կինս—օրիորդ Մառ։*

Կարգի են բերում իրանց և դիմում պատշգամբը։ Տիկին Ֆոկերատը թեանցուկ պատօրի հետ, տիկին Կէթէն՝ ծեր Ֆոկերատի հետ, իսկ օր. Մառին տանում է Յոհաննէսը։ Մենակ և բոլորից վերջում գնում է Բրաունը։

Սենեակը մնում է դատարկ։ Ննջարանից լսում է ծծմոր մեղմ երգը.—«Նանի, Նանի այդ ի՞նչ է շշնջում։ Այդ ի՞նչ է այնտեղ յարդի մէջ շարժւում։ Այնտեղ ճչում են սիրուն ցոդիկներ, նրանք տկլոր են և դեռ անփետուր»։ Պատշգամբից լսում է ափսէների աղմուկը, յանկարծ մրտնում է Կէթէն, սեղանի արկղից ինչ որ հանելու։ Նրա յետևից մտնում է Յոհաննէսը։

ՅՈՀԱՆՆԷՍ. *Բայց Կէթէ—քեզ դեռ կարելի չէ... Քեզ դեռ կարելի չէ վազել։ Թող, ես ինքս...*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Ա՛խ, ես այնքան էլ թոյլ չեմ։*

ՅՈՀԱՆՆԷՍ. (Կռակոս եւ վառվռուն)։ *Գիտես դու։ Նա մի հրաշալի էակ է՝ Ինչպիսի գիտութիւն և ինքնուրոյնութիւն դատողութեան մէջ՝ Եւ երևակայիր մի այդպիսի էակ չարչարուելով հազիւ հազ է ծայրը ծայրին հասցնում։ Դու յիշում ես, Բրաունը մեզ միշտ պատմում էր նրա մասին։ Իսկապէս մեր պարտքն է և պարտականութիւնը, որ նրան համոզենք՝ մի երկու շաբաթ այստեղ ապրելու։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Եթէ դու ցանկանում ես։*

ՅՈՀԱՆՆԷՍ. *Չէ, ես չեմ ցանկանում։ Այդ շատ աւելի կարևոր է քեզ, քան ինձ. դու պէտք է ցանկաս։ Այդպիսի մի էակից դու կարող ես շատ բան սովորել։*

ՏԻԿ. ԿԷԹԷ. *Դու, ճչմարիտ, երբեմն շատ վատն ես, Հանէս։*

ՅՈՀԱՆՆԷՍ. *Բայց մի՞թէ ճիշտ չէ։ Դու պէտք է տենդային եռանդով օգտուես ամեն մի առիթից, որ կարող է մատաւորա-*

պէս քեզ առաջ տանել քո զարգացման մէջ։ Դու պէտք է ձգտես այդ բանին։ Դու պէտք է օրիորդին պինդ պահես այստեղ։ Ես չեմ հասկանում, ինչպէս կարելի է այդքան անտարբեր լինել։

ՏԻԿ. ԿԷԹԷ. Ես, այո, համաձայն եմ քեզ հետ։

ՅՈՀԱՆՆԷՍ. Ձեր մէջ ամենաթեթև կրակ չը կայ. ամենաչնչին ձեռներէցութիւն.՝—Սոսկալի է։

Պաստորը դրսում զնգզնգացնում է բաժակը։

ՏԻԿ. ԿԷԹԷ. Ա՛խ, Հաննէս, հիմա գնա, գնա։ Պաստորը կենաց է առաջարկում։ Ես իսկոյն կը գամ։ Ես, հաւատա, համակարծիք եմ քեզ... Ձէ որ մենք չը պէտք է երկուսս էլ բացակայ լինենք այնտեղից, երբ...

ՅՈՀԱՆՆԷՍ. Դէ, մի նեղանար, մի նեղանար, ԿԷԹԷ։ (Նա համբուրում է նրա արտասուալից աչքերը եւ շտապ գնում է պատշգամբը)։

Լսւում է պաստորի ձայնը։ Ծծմբոր խուլ երգը դեռ ևս մեղմ հընչում է։ ԿԷԹԷի հետ ինչ-որ բան է պատահում. հէնց որ Յոհաննէսը դուրս է գալիս, նա միանգամից նուաղում է, թուլանում և անհաստատ քայլուածքով գնում դէպի պատշգամբը, ձեռքով որոնելով յենուելու մի բան։ Մի քանի անգամ գլխի թեթև պտոյտ է սկսում։ Վերջապէս ոյժ չունենալով գնալու, նա ընկնում է աթոռի վրայ։ Նրա աչքերը անշարժ ուղղած են մէկ կէտի, շրթունքները անձայն շարժւում են։ Աչքերում արտասուք է երևում։ Պաստորը վերջացնում է կենացը։ Բաժակները իրար են զարկում։ ԿԷԹԷն հաւաքում է ոյժերը, վեր է կենում աթոռից և դիմում պատշգամբը։

Ե.—Ա.

(Կը շարունակուի)